

Վազգեն Գ. Համբարձումյան

*Բանասիր. գիյր. դոկտոր*

**ՔԵՐՈՎԲԵ ՊԱՏԿԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ  
ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՈՒ ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ  
ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ\***

**Բանալի բառեր** – ռուսական արևելագիտություն, հայերենագիտություն, հայագիտություն, հայ պատմիչներ, գրական հուշարձաններ, ուրարտագիտություն, հունանիտար գիտություն, գիտական խորհրդատու, հիմնադրությունների սկզբնավորող:

Ներածություն

Հոդվածում քննության առարկա են XIX դ. ռուսական լեզվաբանական դպրոցի անվանի ներկայացուցիչ Քերովբե Պատկանյանի հիմնարար ներդրումը հայերենի հնդեվրոպական բնույթի և հայ բարբառների տեսության ուսումնասիրության հարցերում, որոնք արդի հայագիտության մեջ մնում են ստվերում:

Քերովբե Պատկանյանը XIX դ. 2-րդ կեսի Ռուսաստանի ամենանշանավոր հայագետ-արևելագետն է, որ ներկայացնում էր այդ բնագավառի Պետերբուրգյան հոչակավոր դպրոցը: Գրել է տարբեր բնույթի հիմնարար աշխատություններ, հրատարակել է հին հայերեն (գրաբար) բնագրեր, կատարել հայ պատմիչների երկերի ռուսերեն թարգմանություններ՝ բնագրային ծանոթագրություններով:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 28.08.2024:

Արևելագիտության բնագավառում նա թողել է բավականին յուրահատուկ ուսումնասիրություններ, ունեցել է մեծ թվով պատմագետ և լեզվաբան աշակերտներ, որոնք հետագայում արժանացել են եվրոպական (համաշխարհային) ճանաչման:

Ք. Պատկանյանը նաև հայ բարբառագիտության ռուսական դպրոցի հիմնադիրն է և սկզբնավորողը, որի նմանատիպ աշխատություններն այսօր առավել ևս ուշագրավ են և հարկավոր տեսական ավելի լայն ուսումնասիրության համար: Հայ բարբառների վերաբերյալ նրա գիտական ժառանգությունը՝ տեսական և գործնական բնույթի, եթե լայն դիտանկյունից ենք նայում, ունի առանցքային նշանակություն լեզվի ընդհանուր պատմության տեսանկյունից:

Նրա կյանքի և գիտական գործունեության վերաբերյալ կա բավարարից ավելի գրականություն, սակայն ոչ այնքան խոր մասնագիտական վերլուծությամբ:

## 1. Կյանքի և գիտական գործունեության մասին

Քերովբե Պողոսի Պատկանյան (= Керопэ Патканов) անունով հայրդին սերում է հայտնի Պատկանյանների տոհմից՝ մի տոհմ, որ մեծ ներդրում ունի XIX դ. հայ հասարակական-մշակութային կյանքի տարբեր բնագավառներում՝ գրականություն, գրատպություն, մանկավարժություն, հասարակական այլ գիտություններ, բժշկություն և այլն<sup>1</sup>:

Պետերբուրգում ստացել է արևելագիտական հիմնավոր կրթություն և իր ողջ իմացական կյանքը և գիտական անձանձիր գործունեությունը նվիրել է իր ազգի գիտությանը՝ ժամանակի ռուսական և եվրոպական մշակույթի համատեքստում: Նրա կյանքին և գիտական լայն գործունեությանը նվիրվել են տարբեր ծավալի հոդվածներ հանրագիտարաններում, կենսագրական բառարաններում, գրական և այլ կարգի տեղեկատուներում, գիտական հաղեսներում<sup>2</sup>:

---

1 Տե՛ս **Սաղյան Մ.**, Պատկանյաններ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982: Քերովբե Պատկանյանը մոր կողմից Հարություն Ալամդարյանի թոռն է:

2 Տե՛ս նաև *Энциклопедический словарь*, издатели Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, т. XXIII, СПб, 1898, с. 9: Տե՛ս նաև *Энциклопедический словарь русского библиографического института Гранат*, 11-е стереотипное издание, т. 31, М., (ш ր), с. 361, **Эмин М.**, Профессор Патканов как ориенталист, СПб, 1874, **Марр Н. Я.**, К. П. Патканов, Биографический словарь профессоров и преподавателей СПбского университета, т. 2. СПб 1898. с. 89- 97, **Սղայան Է. Բ.**, Հայ լեզվաբանության պատմություն, հատ. 1, Եր., 1958, էջ 316-324: **Акопян Э. А.**, Керопэ Патканов (жизнь и творчество), Ереван, 1975, **Ստեփանյան Գ. Խ.**, Կենսագրական բառարան, հատ. Գ, գիրք 1 (Մել.

Ծնվել է Ռուսաստանի Նոր Նախիջևանում, 1833 թ. մայիսի 4-ին (Բրոկհաուզի և Եֆրոնի հանրագիտարանում նշվում է՝ 1834 թ.): Մովորել է Ստավրոպոլի հայկական դպրոցում, այնուհետև Մոսկվայի Լազարյան ձեմարանում, եղել ունկնդիր Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների դասընթացների:

Պատկանյանի գիտական գործունեությունը լիովին տեղի է ունենում հիշյալ հաստատության ներսում, որտեղ և գրել է գիտության տարբեր բնագավառներին առնչվող իր հիմնարար աշխատությունները: Հայոց լեզվի կառուցվածքի վերաբերյալ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, եղել է մեծ հայագետների՝ հետագայում անվանի դեմքերի (Ն. Յա. Մառ, Ն. Ադոնց, Հ. Օրբելի, Կ. Կուսիկյան, Ստ. Մալխասյան և ուրիշներ) ուսուցիչը:

Անվանի գիտնականը ընտրվել է Պետերբուրգի կայսերական ակադեմիայի թղթակից անդամ, լայն համագործակցություն է ունեցել եվրոպական հայագետ-արևելագետներից շատերի հետ (Հ. Պետերման, Հ. Հյուբշման, Ս. Բուզգե և ուրիշներ), որոնք հայերենի վերաբերյալ իրենց տեսությունների մշակման ընթացքում մշտապես խորհրդակից են ունեցել նրան: Պատկանյանը տարբեր տարիների գործուն մասնակից է եղել արտասահմանյան երկրների (Փարիզ, Լոնդոն և այլն) գիտական համաժողովների և հանդիպումների:

Վախճանվել է 1889 թ. ապրիլի 2-ին, թողել է մեծ գիտնականի համբավ և նվիրյալ հայագետի անուն ու գիտական հարուստ ժառանգություն, որի ուսումնասիրությունը ներկայումս ևս կարևոր է և խիստ արդիական, մանավանդ տեսական-հայագիտական շատ հարցերին այլ ուսումնասիրողների կողմից տրված լուծումների ճշգրտման առումով:

Ք. Պատկանյանը հայոց լեզվի տեսաբան է, հայ մշակույթի պատմաբան, արևելագետ և ուրարտագետ, գիտական մի քանի ուղղությունների հիմնադիր: Նա հայագիտության ռուսական դպրոցի ականավոր ներկայացուցիչ է, ընդ որում ոչ միայն նախանցյալ դարի, այլև հետագայի ընթացքում, հազվագյուտ մտածողության և ինտուիցիայի գիտնական:

– Ռ.). 1990, էջ 245, «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 9, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 152-153, «Հայկական համառոտ հանրագիտարան», հատ. 4. Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 2003, էջ 164:

## 2. Աշխատությունների բնույթը, ծավալը և բնագավառները

Պատկանյանի գիտական ժառանգությունը պատկառելի է ոչ միայն քանակապես, այլև մասնագիտական ուղղվածության կամ քննության ընդգրկման առումով: Նա հեղինակ է հինգուկես տասնյակ տարբեր ծավալի աշխատությունների, որոնք վերաբերում են արևելագիտության և հայագիտության բնագավառներին, հայ հին մատենագիրների երկերի թարգմանությանը և հրատարակմանը, հայերենի և նրա մեկ տասնյակից ավելի բարբառների տեսությանը և փաստացի վերլուծությանը, բարբառներից մի քանիսի (Մուշի, Նոր Նախիջևանի, Ագուլիսի և այլն) բառապաշարի նյութերի հավաքմանն ու հրատարակմանը, հայերենի ծագման և համեմատական ուսումնասիրությանը, հայոց նախաքրիստոնեական ժամանակաշրջանի ընդհանուր պատմությանը և աղբյուրագիտությանը: Գրել է նաև բանավիճային-քննադատական հոդվածներ, հանդես եկել գրախոսություններով, որոնք ունեցել են հայագիտության մեջ ձիշտ կողմնորոշման և ընթացքի նպատակադրում:

Այդ ժառանգության մանրամասն ուսումնասիրությունը գիտական առանձին հարց է, ուստի այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ նրա աշխատությունների սեղմ բնութագրմանը՝ մեր նկատառումների նշումով<sup>3</sup>:

Ներհուն գիտնականը ոչ միայն հումանիտար գիտությունների բնագավառում, մանավանդ հայ գրավոր մշակույթի, հայերենի և այլ լեզուների առնչությունների, Հայաստանի և նրան հարակից տարածքների ժողովուրդների պատմության, հայ ժողովրդի հետ տարբեր ժամանակներում նրանց ունեցած առնչությունների ուսումնասիրող է, այլև առաջ է քաշում տեսական այնպիսի դրույթներ, հանդես է բերում այնպիսի մտտեցումներ, որոնք կարող էին ուղենշային լինել տվյալ գիտության առաջընթացի համար: Այդպիսին են, օրինակ, հայ բարբառների տեսությանը վերաբերող գաղափարների և սկզբունքների մշակումը, կոնկրետ բարբառների առանցքային հատկանիշների մատնանշումը անվանի բարբառագետի համապատասխան աշխատություններում: Այնինչ դրանք և հարակից այլ խնդիրներ, որ առաջադրած է եղել Պատկանյանը, նոր ժամանակների բարբառագիտական աշխատություններում չեն

3 Հայերենի ծագմանը և համեմատական քննությանը, հայերենի բարբառներին նվիրված աշխատություններին անդրադառնալու ենք առանձին այդ բնագավառի ներկայիս տվյալների, ձեռքբերումների, մանավանդ հեռանկարի համատեքստում:

արժանացել պատշաճ գնահատության, ոչ էլ հաշվի են առնվել համապատասխան բնույթի նոր ուսումնասիրություններում՝ տեսական քննության միակողմանիության պատճառով: Այնինչ հայ բարբառագիտությունը մեծապես կշահեր հարցերի բազմակողմանիության, ընդ որում նաև Պատկանյանի տեսական դրույթների և հանդես բերած մոտեցումների ընդգրկման պարագայում: Ինչևէ, այս առումով մեր օրերի բարբառագիտությունն ունի շտկումների և վերանայումների, մանավանդ տեսության գնահատության կարիք:

ա) Գրական-գեղարվեստական և մատենագիտական գործերը

Ք. Պատկանյանը սկզբնական շրջանում գրել է բանաստեղծություններ, կատարել այլ լեզուներից գեղարվեստական թարգմանություններ, կազմել է հայ հին գրավոր հուշարձանների մատենագիտությունը, որը չի վրիպել հետագա ուսումնասիրողների տեսադաշտից<sup>4</sup>: Հրատարակել է իր պապի՝ Ժամանակի հայտնի մշակութային գործիչ, գրող Հարություն Ալամդարյանի բանաստեղծությունները<sup>5</sup>: Նման ժառանգությունն այսօր ունի պատմական նշանակություն՝ իր մանրամասնություններով ու ճանաչողական ընդգծվածությամբ:

բ) Պատմագիտական, թարգմանական և այլ բնույթի երկերի հրապարակումներ

1860-1880-ական թթ. եղել են Պատկանյանի գիտական բուն գործունեության տարիները: Այդ ընթացքում գրել է և հրապարակել պատմագիտական ինքնատիպ աշխատություններ, կատարել հայ մատենա-

4 Стихотворения в переводах на армянский язык из Гейне, Шиллера, Беранже, Томаса Мура и др. (ընդամենը 54 բանաստեղծություն, որոնցից մի քանիսը տպագրված է Միանսարյանցի «Քնար հայկական»-ում): О сатире и сатирах Кантемира, «Ставропольские губернские Ведомости», 1853, 2, с. 11-18. Catalogue de la littérature arménienne depuis le commencement du IV siècle jusque vers le milieu du XVII, St. Péters[bourg], 1860. Статьи по истории, географии и литературе Армении в Энциклопедическом словаре 1861-1863 гг. Очерк истории древней армянской литературы, История Всеобщей литературы, изд. В. Т. Корша, Выпуск IV, СПб, 1880: Պատկանյանի աշխատությունների ամբողջական ցանկը տե՛ս **Փաթկանով Կերոպե Պետրովիչ**, Биографический очерк, составил Н. Веселовский, «Заметки Восточного отделения Русского археологического общества», т. 5, СПб, 1890:

5 Տե՛ս **Ալամդարեանց Յարութին վարդապետ**. Չափաբերականք, СПб, 1884 (= Арутюн вардапет Аламдарянец, «Мирные слова»):

գիրներից մի քանիսի (Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Թովմա Արծրունու և այլ հեղինակների) երկերի թարգմանություններ՝ բանասիրական ծանոթագրություններով և բնագրագիտական մեկնություններով: Այդ աշխատություններից մեկ-երկուսը չեն վրիպել ժամանակի եվրոպական գիտության ներկայացուցիչների գնահատողական ուշադրությունից՝ արժանանալով հատուկ գրախոսությունների<sup>6</sup>:

Անդուլ և նվիրյալ աշխատանքի արդյունք է հայ միջնադարի մատենագիրների մի որոշակի մասի երկերի ռուսերեն թարգմանությունը. գիտական հրատարակման պատրաստումը, որպիսով, տեղին է ասել, թե ռուսական գիտության սեղանին են դրվել հայոց ոչ վաղ անցյալի նմանօրինակ վկայությունները՝ ի նպաստ ժամանակի մշակույթի, հասարակագիտական մտքի առաջընթացի: Մեծ է անվանի բանասեր Պատկանյանի ավանդն այս բնագավառում ևս, որպիսով անուրանալի է նրա վաստակը հայ աղբյուրագիտության մեջ:

Պատկանյանի մագիստրոսական թեզը, ինչպես գիտենք, ժամանակին թարգմանվել է ֆրանսերեն՝ ըստ այդմ ստեղծելով եվրոպական պատմաբանների կողմից օգտագործման հնարավորություն<sup>7</sup>: Եվրոպացի պատմաբանները, առավել ևս լեզվաբաններն իրենց հիմնարար

---

6 Տե՛ս «История Агван (Кавказских албанцев) Моисея Каганкатуаци (X в.)», перевод с армянского, с примечаниями и приложениями, СПб, 1861 [գրախոս., Ս. И. Лерх. Դուսական կայսերական հնագիտական ընկերության «Տեղեկագիրք»-ում (հատ. III, էջ 479-499)]. «История императора Иракля». сочинение епископа Себеоса (VII в.), перевод с армянского, с примечаниями, СПб, 1862. «История халифов Гевонда» (VII в.), перевод с армянского, с примечаниями, СПб, 1962. «Опыт истории династии Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями», «Труды Восточного отделения Археологического общества», т. XIV, 1863 (ֆրանս. գրախոս., V. Langlois. Opit istorii dynastii Sassanidow... , «Journal Asiatique», 1863, Sixième serie, t. II, pp. 304-305). «Хронографическая история Мехитара Айриванского» (XIII в.), перевод с армянского, с примечаниями, «Труды Восточного отделения Археологического общества», т. XIV, 1869. «Дневник осады Испагани Афганами», С. Гиланенц (XVIII в.), СПб, 1870, 58 с. «История монголов инока Магакия» (XIII в.), СПб, 1871. «История монголов по армянским источникам» (XIII в.), Выпуск I, СПб, 1873: «История монголов по армянским источникам» (XIII и XIV вв.), Выпуск II, СПб, 1874. «Անանիայի Շիրակունույ Մնացորդ բանից» (СПБ, 1877). «Армянская география VII в., приписывавшаяся Моисею Хоренскому». Текст, перевод и примечания (СПб, 1877): «История Армении Тома Арцруни» (автора X века, СПб, 1887) [= Թովմայի վարդապետի Արծրունույ Պատմութիւն տանն Արծրունեաց ի լոյս էած Ք. Պ.]:

7 Տե՛ս «Опыт истории династии Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями», «Труды Восточного отделения Археологического общества», т. XIV, 1863 (ֆրանս. թարգմ. «Essai d'une histoire de la dynastie des Sassanides, d'après les renseignements fournis par les historiens arméniens», «Journal Asiatique», 1866, I, pp. 101-238. թարգմանությունը՝ Prud'homme-ի):

նշանակության աշխատություններում արծարծված շատ հարցերի լուծման նպատակով նամակագրությամբ խորհրդակցել ու հաշվի են նստել անվանի աղբյուրագետ-պատմաբանի կարծիքի հետ<sup>8</sup>:

Ք. Պատկանյանը, տարիներ ի վեր աշխատելով հայ մատենագիրների առավել հայտնի երկերի թարգմանության և հրատարակության պատրաստման գործով, ռուսերեն տպագրել է նաև Փավստոս Բուզանդի, Մխիթար Անեցու, Մաղաքիա արեղայի, Սեբեոսի, Օգոստինոս Բաշեցու և ուրիշ հեղինակների երկերը և նման այլ աշխատանքներ<sup>9</sup>: Բնագրագիտական նման աշխատանքը, կարելի է մտածել, հայ աղբյուրագիտության սկզբնավորման նախապայման է, որ հիմք է հանդիսանում հետագա զարգացման:

#### գ) Հայոց լեզվի և հայ բարբառների վերաբերյալ աշխատությունները

Այս բնագավառը, կարելի է ասել, Պատկանյանի գիտական գործունեության միջնաբերդն է («բաստիոնը»), որի շրջագծում են այդ աշխատություններից տարբեր, սակայն ամբողջովին նպատակային «թելերով» (պատմություն, աղբյուրագիտություն, բանասիրություն և այլն) ազուցված թարգմանությունները, գրախոսությունները, բանավիճային հոդվածները, որոնց թեմատիկան գրեթե միշտ խիստ արդիական է, և այսօր նույնպես կարող է գիտական նոր հիմունքներով առանձին քննության առարկա լինել:

Նախ՝ իրականություն է այն, որ հայ բարբառագիտության ռուսական դպրոցի ներկայացուցիչների (Ք. Պատկանյան, Լ. Մսերյանց և ուրիշներ) աշխատություններին հետագա ուսումնասիրողները, հատկապես բարբառագետներն անդրադարձել են ակնարկի ձևով, և տե-

8 Նկատենք, որ Պատկանյանը և ժամանակի եվրոպական արևելագիտությունը, ընդամին հայագիտությունը, ունեն առանձին ուսումնասիրության կարիք:

9 Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական, (ՇՊԵ, 1867): Մաղաքիայի արեղայի Պատմութիւն վասն ազգին նետողաց (ՇՊԵ, 1870). Ներառում է «L'Histoire de l'empereur Héraclius par Sebéos (VII siècle)» և «Le commencement de l'Histoire de Mekhithar d'Ani (XII siècle) [= «Պատմութիւն Սեբեոսի և Սկիզբն Պատմութեան Մխիթարայ Անեցոյ»] (ՇՊԵ, 1879)] գործերը: Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց. 1883 [= Faustus de Byzance, Histoire d'Arménie (IV siècle), St. Peters., 1883]: Նշխարք մատենագրութեան հայոց. Ազուստինոս Բաշեցի: Պատմութիւն թագաւորացն Հայոց, որ ի Սիս, -1 ժամանակագրութիւն, Մինաս Թոխատեցի: - Աբրահամ Անկիւրացի (Ղաբլան):- Յիշատակարանք. ի լոյս էած Ք. Պ., (ՇՊԵ, 1884):

սական շատ հիմնադրույթներ ներկայացրել են բավականին ընդհանուր գծերով, որն անպայման վերանայելի է<sup>10</sup>:

Այդ թեմայով գրված իր հիմնական աշխատությունը Պատկանյանը ներկայացրել է իբրև դոկտորական ատենախոսություն, որը նաև թարգմանվել է ֆրանսերեն, գրախոսվել ժամանակի անվանի բանասերների ձեռքով<sup>11</sup>: Ըստ Պատկանյանի՝ նախորդ ուսումնասիրողները նոր բարբառները (наречия) համարում են աղավաղում հին գրական լեզվի, «առանց պարզ պատկերացման և գիտական որոշակի հայացքների»։ նման մոտեցումը շարունակվում է նաև հետագայում<sup>12</sup>:

Այնուհետև. նա ոչ թե շարունակող է իրենից առաջ բարբառների վերաբերյալ թռուցիկ ակնարկներով հանդես եկած հայագետների (Յ. Յ. Շրյոդեր, Շ. Ջրպետ և ուրիշներ), այլ նշանավորում է միանգամայն նոր փուլ բարբառների թե՛ տեսական և թե՛ առավել ևս գործնական հիմքերի առումով<sup>13</sup>:

Պատկանյանը այս թեմայով իր աշխատությունները, նաև Ագուլիսի բարբառի առանձին քննությունը լույս է ընծայել ավելի վաղ, քան Ա. Այտընյանի հայտնի աշխատությունը<sup>14</sup>: Այտընյանը նույնպես կատարում է բարբառների տարածքային («աշխարհագրական») հատկանիշով խմբավորում, որը հետագա ուսումնասիրողներն այն համարում են բարբառների դասակարգման առաջին փորձ<sup>15</sup>: Այնինչ Պատկանյանը մինչև այդ արդեն ուրվագծել էր բարբառների հիմնական խմբերի տեսությունը,՝ հնչյունական և քերականական հատկանիշներ

---

10 Հմմտ. **Պարիբյան Ա. Ս.**, Համառոտություն հայ բարբառագիտության, Եր., 1941: Նույնի՝ Հայ բարբառագիտություն (Հնչյունաբանություն և ձևաբանություն), Եր., 1954: Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 316-324: Ա. Վ. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957, էջ 54, 58-60, 67-68:

11 Տե՛ս Исследование о составе армянского языка» [докторская диссертация], СПб, 1864. 110 էջ [ֆրանս. թարգմ.՝ Recherche sur la formation de la langue arménienne, «Journal Asiatique», 1870, t. 2 (mémoire traduit du russe par M. Evariste Prudhomme), revus sur le texte original et annoté par M. E. Dulaurier, Paris, 1871. նաև վերլուծական՝ F. Justi, “Gött. gel. Ans.”, 1866, St. 25, S. 991-1000]:

12 Տե՛ս **Патканов К.**, Исследование о составе армянского языка, с. 13 և հջ.:

13 Եվ հիշենք, որ նախկինում տարբեր առիթներով Պատկանյանին անվանել են «հայ բարբառագիտության հայր»: Տե՛ս Энциклопедический словарь, издателя Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, т. XXIII, էջ 8: **Տաշեան Հ. Յ.**, Ուսումն դասական հայերէն լեզուի, Վիեննա, 1920, էջ 439:

14 Տե՛ս հեղինակի Ueber den Armenischen Dialekt von Agulis (Berlin, 1865): Ա. Այտընեան. Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:

15 Տե՛ս **Պարիբյան Ա. Ս.**, Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջը, «Տեղեկագիր» ՀՍՄԴ ԳԱ, 1952, 8, էջ 41-58: Այդ խմբավորումը, ի դեպ, այնքան էլ նոր չէ՝ ի համեմատություն հայ մատենագիրների կողմից կատարվածի:



րի հիման վրա նկարագրելով մեկ տասնյակից ավելի բարբառներ: Ուստի տեղին է ասել, թե Ք. Պատկանյանի այդ աշխատություններով է, որ սկիզբ է առնում հայ տեսական բարբառագիտության պատմությունը:

Պատկանյանը խիստ մոտեցում ունի Այտընյանի՝ բարբառների խմբավորման վերաբերյալ (1. Հայաստանի բնիկներ՝ Վան, Միջագետք, 2. Կ.Պոլիս և Փոքր Ասիա, 3. Լեհաստան և Հունգարիա, 4. Ասորախան և Պարսք, Ռուսքից մինչև Հնդկք)՝ կարծելով, որ սա նրա գրքի ամենաթույլ կողմն է. «Նա ինքը, սակայն, գիտակցում է իր կարծիքի սխալ լինելու մեջ, երբ մի քանի տող ներքևում ասում է, թե առաջին երեք խոսվածքները կազմում են բուն մեկ, մի քանի ոչ կարևոր ձևափոխություններով»<sup>16</sup>: Եվ կարծում է, որ Այտընյանի «Քննական քերականության» ամենից հետաքրքիր և, դրա հետ միասին, ամենաթույլ մասը առաջինն է, որում հեղինակը տարբերություն չի դնում «խոսվածքների» (наречие), բարբառների (диалект) և բանավոր խոսքի (говор) միջև»<sup>17</sup>: Հայ բարբառների տեսության, մանավանդ պատմության առանցքային հարցերը մինչև օրս մնում են առարկայորեն (օբյեկտիվորեն) չուսումնասիրված: Դա ամենից առաջ նկատելի է բարբառների դասակարգման, ուսումնասիրության պատմության շրջանաբաժանման, տեսական հիմունքների մշակման հարցերում: Այդ բնագավառներում Ք. Պատկանյանի գիտական ներդրումը մինչև օրս չի ստացել իր ճիշտ գնահատությունը, ավելին՝ բարբառների ուսումնասիրության գործում ռուսական լեզվաբանական դպրոցի գործուեությունն՝ առհասարակ:

Ավանդաբար հայ բարբառագիտության, իբրև հայերենագիտական ինքնուրույն գիտակարգի (դիսցիպլինի) հիմնադիր է համարվում անվանի լեզվաբան Հ. Աճառյանը: Սակայն նա իր հսկայական աշխատանքով միայն շարունակողն է իրենից շուրջ չորս-հինգ տասնամյակ առաջ հիմք դրված այդ գիտակարգի:

Ք. Պատկանյանը 1860-ական թթ. կեսերից գրում է հատուկ աշխատություններ, առանձին բարբառների նվիրված հոդվածներ, կազ-

16 Патканов К., Исследование о составе армянского языка, с. 15:

17 Նույն տեղում, էջ 15-16: Ըստ հիշյալ երեք տեսակի տարբերակման՝ թերևս կարելի է մտածել, որ բարբառ և խոսվածք հակադրության, իբրև հոդորդակցական կայուն եզրերի («վիճակների». causa finalis) միջև ընկած տարբերակ է, այսպես կոչված խոսելաձևը (ռուս. наречие. խոսելաձև «ասվածք» - «изолект»). Խոսելաձևը («ասվածքը») այդ շրթայում անցումն է բարբառի և խոսվածքի միջև («անցում բարբառից խոսվածքի», կամ՝ հակառակը՝ խոսվածքի վերաճում բարբառի):

մում բարբառային բառերի ցանկեր, որոնցում նոր հիմունքներով անդրադառնում է հայերենի ոչ միայն բնույթին ու ծագմանը, այլև վերջինիս բարբառներին, գրական և բարբառային տարբերակների փոխհարաբերության առանցքային հարցերին<sup>18</sup>:

Եվրոպացի հայագետների ուշադրությունից չէին կարող վրիպել այդ ինքնօրինակ աշխատությունները, որոնցից հատկապես առաջինի վերաբերյալ Հ. Պետերմանը հանդես է եկել մի առանձին հաղորդմամբ՝ գերմանական հայտնի ամսագրերից մեկում<sup>19</sup>:

Պատկանյանը իր մենագրություններից մեկում ուշագրավ դիտարկումներ ունի կովկասյան գնչուների բարբառների բնույթի վերաբերյալ, որն էլ ժամանակին գրախոսել է լեհ վաղամեղիկ լեզվաբան Յ. Հանուշը<sup>20</sup>: Անվանի հայագետը միաժամանակ այդ հարցերի տեսաբան համակարգող է՝ եվրոպացի հայերենագետների հետ համագործակցության պայմաններում (Հ. Պետերման, Հ. Հյուբշման և ուրիշներ)<sup>21</sup>:

Հայտնի է, որ Հյուբշմանը, 1890-ական թթ. Ֆրանսիայում մի գիտաժողովի ժամանակ լսելով ուսանող Աճառյանի զեկուցումը լազերենի մասին, ինչպես Աճառյանն ինքն է գրում այդ առիթով, հորդորում է նրան զբաղվելու հայերենի բարբառներով, որն այնքան կարևոր է համարվում հայերենի տեսությանը և պատմությանը ավելի հանգամանավից ձեռնամուխ լինելու համար<sup>22</sup>: Նկատենք, որ նման

---

18 St'u Ueber den Armenischen Dialekt von Agulis (Berlin, 1865). «Исследование о диалектах армянского языка: Филологический опыт» (Санкт Петербург, Имп. Акад. наук, 1869, 110 էջ): «Материалы для изучения армянских наречий. Выпуск I. Говор Нахичеванский» (СПб, 1875, 140 էջ): «Материалы для изучения армянских наречий. Выпуск II. Мушский диалект» (СПб, 1875, 71 էջ): Առաջին աշխատության վերաբերյալ լույս է տեսնում Հ. Պետերմանի գրախոսությունը. Ueber den Armenischen Dialekt von Agulis, 1865: Հաղորդում՝ Н. Petermann, «Monatsberichte der Königl. Akademie der Wissenschaftes zu Berlin. Sitzung der philosophisch-historischen Klasse», 26, Nov. 1866.

19 St'u **Petermann H.**, Monatsberichte der Königl. Akademie der Wissenschaftes zu Berlin. Sitzung der philosophisch-historischen Klasse, 26, Nov. 1866.

20 St'u **Патканов К.**, Цыганы: Несколько слов о наречиях закавказских цыган: боша и карачи, Санкт Петербург, Имп. Акад. наук, 1887: Վերջինիս գրախոսությունը, որ, ցավոք, մեր ձեռքին չունենք, լույս է տեսել՝ «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes» I Band (Wien, 1887, p. 80-81) ամսագրում:

21 Հմմտ. Պետերմանի նամակները՝ գրված Պատկանյանին (Մաշտոցի անվան հին ծեռագրերի ինստիտուտ Սատենադարան, Պատկանյանների ֆոնդ, թղթապանակ 148, վավերագիր 14): Ավելի մանրամասն տե՛ս **Ամիրջանյան Ա. Հ.**, Հայագետ Հայնրիխ Պետերմանի նամակները Քերովբե Պատկանյանին, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, 2, էջ 76-83:

22 St'u **Գարեգինյան Գր.**, Աճառյանը Փարիզում և Ստրասբուրգում, «Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից», Եր., 1967, էջ 189:

հորդոր ու նկատառումներ բազմիցս հայտնել է Ք. Պատկանյանը իր աշխատություններում, այլև այն, որ Հյուբշմանը քաջատեղյակ էր Պատկանյանի թարգմանաբար հայտնի համապատասխան աշխարհատանքներին:

Վերջապես, հայ բարբառների վերաբերյալ բավականին հետաքրքիր և մինչև այժմ ըստ ամենայնի չուսումնասիրված նյութեր են պարունակում անվանի բանասեր-լեզվաբանի բառարանագրական աշխատանքի երկու պրակները<sup>23</sup>:

դ) Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության հարցեր

Պատկանյանի գիտական գործունեության տարիներին (XIX դ. 60-80-ական թթ.), ոչ անկախ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության, Եվրոպայի մյուս կրթօջախների միջավայրում և այլ ձևերով (թղթակցություն, նամակագրական կապեր և այլն) հայոց լեզվին գործնականում հմտացած լինելու հանգամանքներից, եվրոպացի շատ անվանի հայերենագետներ մեծ հետաքրքրություն են հանդես բերում հայերենի ծագումնային բնույթի և կառուցվածքի վերաբերյալ, փորձում են նոր հայացքով քննելու շատ հարցեր:

Այդ գործում նշանակալից է եղել Պետերբուրգի գիտական միջավայրի դերը, մի միջավայր, որտեղ բացառիկ հեղինակություն է եղել Ք. Պատկանյանը, որի աշխատությունները (ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզուներով) հայտնի էին Եվրոպայում: Կային նաև անմիջական կապեր (նամակներ, գրավոր հարցումներ, գրախոսություն և այլն) հայագիտությամբ հետաքրքրվող, հայերենի պատմությունն ուսումնասիրող գիտնականների հետ, որոնց համար Պատկանյանի այս կամ այն նկատառումը հետաքրքրող հարցերի վերաբերյալ անպայման կարևոր էին հիշյալ համեմատաբանների, հայագետների համար:

Հնդեվրոպական լեզուների մեջ հայերենի ձյուղային պատկանելության հարցում նոր դիրք է առաջարկում Հյուբշմանը, որի տեսությունը առավելապես հիմնված էր հայերենի հնչյունական համակարգի և բառապաշարի (դարձյալ հնչյունականով պայմանավորված)

23 Стѹ Материалы для армянского словаря, вып. I- II, СПб, 1882-1884:

ինքնուրույն՝ իրանական լեզուներից առանձին լինելու հիմքի վրա, իսկ քերականական հատկանիշներին այդ տեսության մեջ աննշան տեղ էր տրված: Հյուբշմանը գերմանական համեմատաբանության, այսպես կոչված, երիտքերականական դպրոցի ներկայացուցիչ էր, ուստի լեզուների համեմատության մեջ նա մեծ տեղ էր տալիս հնչյունական օրենքի մեթոդին, որն էլ վճռական է եղել հայերենի ցեղակցային բնույթի պարզաբանման հարցում:

Այնինչ Պատկանյանի մոտեցումներն այդ հարցում ավելի լայն ընդգրկումներ էին ենթադրում, և նա հատուկ աշխատությամբ հայտնել է իր առարկությունը՝ անելով բավականին տեղին և հիմնավոր դիտարկումներ հայոց լեզվի իրակությունների ամբողջական՝ ոչ առավելապես հնչյունական, այլ նաև մյուս բաղադրիչների հիման վրա բուն հարցի քննություն<sup>24</sup>: Սա տեսական կողմնորոշման հարց է եղել, որի լուծման գնահատությունը հետագա ուսումնասիրողների կողմից տրվում է միայն Հյուբշմանի հեղինակությունը նկատի ունենալով, որն առարկելի է:

Ինչպես բարբառների դասակարգման, այնպես էլ հայերենի ինքնուրույն լեզու լինելու վերաբերյալ տեսության ամբողջական մշակման հարցերում կարևոր են եղել Պատկանյանի դիտարկումները: Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի ինքնուրույն լեզու լինելու իրողությունը Պատկանյանը քննում է հայերենի տվյալների ամբողջության մեջ, քան առավելապես հնչյունական, մասամբ բառային (բնիկ թե փոխառյալ) հատկանիշների հիման վրա:

Եվ պետք է նկատի ունենալ, որ հիշյալ հարցերի մանրամասն քննությունից պարզվում է, որ հայերենի տեսության բնագավառում, հատկապես նրա հնդեվրոպական բնույթի, ճյուղային պատկանելության և ինքնուրույնության, հայ բարբառների հնության և պատմական զարգացման տարբեր փուլերի մեջ գրական լեզվի հետ ունեցած ամնչությունների բազմաթիվ և տարաբնույթ հարցերը Պատկանյանին զբաղեցրել են ավելի վաղ, նրա կողմից դրանք բարձրացվել են գիտական մեծ հեռանկարային դրույթների ձևով:

Հայ բարբառների տեսական քննության և գործնական առանձնացման, ինչպես նաև հայերենի հնդեվրոպական բնույթի և առանձին

---

24 Տե՛ս **Патканов К. П.**, О месте, занимаемом армянским языком в кругу индо-европейских, Тифлис, 1879, «Известия» Кавказского отдела И. Рус. Геогр. Общества, том VI: Գերմ.՝ Ueber die Stellung der Armenischen Sprachen im Kreize der Indo-Europäischen, «Russische Revue», 1880, Heft 7, S. 70-89 (թարգմ.՝ Zeidlitz) [= Հայ.՝ «Թէ ինչ տեղ է բռնում հայերէն լեզուն հնդկաեվրոպական լեզուների շրջանում», «Փորձ», Թիֆլիս, 1880, III, էջ 77-98 (թարգմ. խմբագրության)]:

ձյուղի լեզու լինելու հարցերում Պատկանյանն ունեցել է իր ինքնուրույն առաջնային մոտեցումները, որոնք հիմք են դարձել հետագա ուսումնասիրողների համար իրենց մշակումների և առանձնացումների մեջ<sup>25</sup>: Հայերենի համեմատական ուսումնասիրության պատմության մեջ Պատկանյանն ունի իր առաջնային տեղը՝ իբրև ցեղակից լեզուների շրջանում հայերենի դիրքի վերաբերյալ տեսական գիտելիքներ սկզբնավորող լեզվաբան, և այդ վաստակը ունի իր նշանակությունը հայերենի ներկայիս համեմատական-տիպաբանական քննության բնագավառում:

ե) Բանասիրություն, բնագրագիտություն (աղբյուրագիտություն), բառագիտություն

XIX դ. 2-րդ կեսին Ռուսաստանում իր հիմքերն էր ամրապնդում և ծավալում հայ մշակույթի այն բնագավառը, որը հայտնի է հայագիտություն ընդհանուր անվանումով. հայտնի են այդ բնագավառի շատ երևելիներ, որոնց թվում է անվանի բանասեր և բնագրագետ (աղբյուրագետ) Ք. Պ. Պատկանյանը:

Այս բնագավառում նա թողել է գիտական նկատելի ժառանգություն հայկական ամսանունների, ակնեղենի և նրանց անվանումների ուսումնասիրություն, առանձին դիտարկումներ և նկառառումներ հայագիտական հրատարակությունների առիթով, կազմված ձեռագրերի և ձեռագրացուցակների գնահատություն, ձշգրտումներ, լրացումներ և այլն<sup>26</sup>:

25 Տես **Սդայան Է. Բ.**, նշվ. աշխ., էջ 315-321: **Ամիրջանյան Ս. Հ.**, Քերովբե Պատկանյանը որպես համեմատաբան, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, N 1, էջ 53-62: Նույնի Քերովբե Պատկանյանը հայ լեզվաբան (թեկն. Աստեմախոս., ձեռագիր. գիտ. դեկ. ՀՀ. ԳԱԱ թղթ.-անդամ Ա. Ա. Աբրահամյան): **Амирджанян С. Г.**, Керопэ Патканян как армянский языковед (автореферат канд. дис.), Ереван, 1988, с. 16-20:

26 Несколько слов о названиях древних армянских месяцев, Труды Восточного отделения Археологического общества, т. XVII, 1871: “Замечания на статью г. Эмина «Вахагн Вишапаках», Труды Восточного отделения Археологического общества, т. XVII, 1873. Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке, СПб, 1873. Правила для издания восточных источников отечественной истории, составленные А. А. Куником совместно с К. П. Паткановым, «Известия» Императорского Российского археологического общества, т. VIII, с. 270-271 (Գրախոս. «Փորձ» անագիր, 1877, N IV, էջ 330-339). Библиографический очерк Армянской исторической литературы. СПб, 1880, Труды 3-го Международного съезда ориенталистов, СПб, 1880, т. I (= «Համառոտ տեսություն հայ պատմական գրականության», «Փորձ», 1880, I, էջ 1-26. «Հայ պատմագիրների երկասիրութեանց ցուցակը, Նույն տեղում, էջ 1-40 (Գրախոս. E. de Dillon, Histoire de la literature arménienne, «Le Muséon», 1982, I, № 1).

Ինչպես արդեն նշել ենք, նա կազմել է բարբառներից մի քանիսի յուրահատուկ բառերի սեղմ ցանկեր, որոնք հիրավի արժանի են հատուկ ուսումնասիրության, որովհետև դրանք այսօր այնքան էլ բացատրելի կամ մեկնաբանելի չեն՝ բարբառների համեմատաբար մոռացության մատնված լինելու պատճառով:

#### զ) Արևելագիտություն, ուրարտագիտություն

Արևելագիտության բնագավառում նույնպես Ք. Պատկանյանը հայտնի է իր աշխատություններով: Նրա գիտական ժառանգության մեջ դրանք պատկանելի թիվ են կազմում: Մանրամասն ծանոթացումից երևում է, որ դրանք գրված են նյութի լավագույն իմացությամբ, վերլուծության խորությամբ, արդիական են և ոչ վաղանցիկ, այսօր ևս արժանի են ամենայն ուշադրության՝ թեմատիկ առումով նույնպիսի նոր աշխատությունների ձեռնամուխ լինելու դեպքում: Մեզ առավել հետաքրքրել են ուրարտերենին և առհասարակ սեպագրությանը նվիրված աշխատությունները (թվով՝ 6), որոնց մի մասը, ի դեպ, թարգմանվել է ֆրանսերեն, այլև գրախոսվել<sup>27</sup>:

Միջազգետրյան քաղաքակրթությանը, ուրարտական արձանագրությունների վերծանությանը և վերլուծությանը անդրադառնալիս Պատկանյանը կատարում է փաստերի հիմնավոր մեջբերումներ և ա-

---

Об археологической ценности фотографического альбома Армении, работы г. Куркчянца, СПб, 1880, Труды 3-го Международного съезда ориенталистов, СПб, 1880, 7 с. (= Պ. Քիրքճեանի կազմած Հայաստանի լուսանկարչական հասարածոի հնախօսական արժեքը, «Փորձ», 1880, X, էջ 133—138). «Հայագետ Սէն Մարտէն, նորա կենսագրութիւնը և գրաւոր երկասիրութիւնները», «Փորձ», 1881, N V-VI, էջ 23-28. Из нового списка географии, приписываемой Моисею Хоренскому, Журнал Министерства народного просвещения, 1883, ч. 226, с. 21-32: Une inscription trulingue de Hamadan, «Muséon», 1885, N 1, p. 88-89:

27 «Ванские надписи и их значение для истории Передней Азии. О древней Грузинской хронике и об армянской, Журнал Министерства XIX просвещения», 1883, ч. 230. 44 (թարգմ.՝ «Վանի արձանագրութիւնները և նոցա նշանակութիւնը Առաջաւոր Ասիայի համար (Կրաց հին Քրոնիկոն), «Արձագանք», 1885, N 24, 26, 1886, N 1, 2, 5, 6, 7, 9 և 10 ( թարգմ.՝ X. Иоанисяна). Клинообразные надписи , Труды V Археологического съезда в Тифлис. М., 1887, с. 115-122., Ванские надписи и их значение для истории Передней Азии, Журнал Министерства народного просвещения за 1874-1881годы, СПб, 1874-1884. De quelques inscriptions de Van récemment découvertes, Muséon, 1882, N 1, p. 541-547). «О клинообразных надписях Ванской системы, открытых в пределах России, Журнал Министерства народного просвещения, 1882, ч. 224. О клинообразных надписях Ванской системы, открытых в пределах России, Журнал Министерства народного просвещения, 1883 (Գրախոս.՝ Revue critique d'histoire etc., Paris, 1883. Chronique (= De quelques nouvelles inscriptions cunéiformes, découvertes sur le territoire russe , Muséon , 1883, N 3, p. 358-564. հեղինակակից՝ A. Sayce):

պացույցներ: Դրանք լույս են տեսել իբրև առանձին մենագրություն, որպես գիտական հանդեսներում հրատարակված հոդվածներ, որոնք ժամանակին մասամբ գրախոսվել են և գնահատվել ըստ արժանավույն<sup>28</sup>:

Հիշյալ բնագավառներին վերաբերող հետագա աշխատություններում այնքան էլ, ցավոք, չեն անդրադառնում Պատկանյանի տեսական դիտարկումներին: Նա գրել է նաև գրախոսականներ և քննադատական հոդվածներ, հայտնել է ժամանակի գիտության համար հրատապ խնդիրների առնչությամբ իր վերաբերմունքը<sup>29</sup>: Նկատենք, որ XIX դ. 2-րդ կեսին հիմնված ուրարտագիտությունը հետագայում այլ մոտեցումների հունով գնաց, որպիսով Պատկանյանի կատարածը մի տեսակ մնաց մի կողմի վրա, քան կարելի էր նկատի ունենալ հետագայում:

### 3. Պատկանյանի լեզվագիտական ժառանգության գնահատությունը

Մեծ է Ք. Պատկանյանի ներդրումը ժամանակի հասարակական գիտության, հատկապես պատմության, բանասիրության, հայերենի կազմության քննության բնագավառում: Նրա աշխատություններն իրենց անմիջական արձագանքն էին գտնում եվրոպացի ուսումնասիրողների շրջանում, որովհետև դրանցում սեղմ ներկայացվում և գնահատվում էր նախկինում այս կամ այն չափով կատարվածը, միաժամանակ կանխագծվում առանցքային խնդիրների լուծման ուղիները: Դրանք թարգմանվում էին, երբեմն գրախոսվում, ինչպես նաև հաճախ տեղիք տալիս գրավոր հարցումների և պարզաբանումների: Այս ոլորտում նույնպես նա ճանաչված գիտնական էր, հայագիտության

28 Նկատի ունենք հետևյալ գործերը. О мнимом походе Таклат-Паласара к берегам Инда, СПб, 1879 (Труды 3-го международного съезда ориенталистов, СПб, 1880, т. I), 40 с. (Գրախոս., **Emile Dillon**. La Campagne imaginaire de Teglatphalasar II sur les bords de l'Indus, L'Athenaeum Belge, 1880, 5, p. 57. Գրախոս., **А. Ерицов**, О мнимом походе Таклат Паласара к берегам Инда, «Кавказ», 1879, N 115): Վանի արձանագրությունները և նրանց նշանակությունը Առաջադուր Ասիայի պատմութեան համար, Թիֆլիս, 1883 (հեղինակակից **Պաա. Շաղութեան**):

29 Գրախոսություններն են՝ **Lauer M.**, Armenische Chrestomatie, Revue critique internationale, 1881, N 1, p. 23-28. **J. Olshausen**, Parthava und Pahlav, Mâda und Mâh, Revue critique international, 1881, N 1, p. 32-37, N 2, p. 79-83 (Ստորագր. **K. de Restaing**. Կա հայ. թարգմանությունը). Géographie de Moïse de Corène, d'après Ptolémée éd. le père Arsène Soukry. Գ. ս., p. 447-452 (Ստորագր. **K. de Restaing**).

հեղինակությունն ռուսական ակադեմիական գիտության հումանիտար մարզում: Նման շրջագծով աշխատանքների ծավալումը ժամանակի եվրոպական, նաև համառուսական գիտական մտքի գործունեության լավագույն ձևերից է, որ գտնում ենք նաև Պատկանյանի գիտական գործունեության դեպքում<sup>30</sup>:

Եվ ինչպես վերը նշեցինք, Պատկանյանը հայերենի ընդհանուր տեսության, հնդեվրոպական բնույթի ճիշտ գնահատության ներկայացուցիչ է, բայց նա ավելի շատ ուշադրության է արժանացել իբրև բարբառների վերաբերյալ առանձին դիտարկումներ ունեցող (ցավոք, ոչ իբրև սկզբնավորող կամ տեսության հիմնադիր, որն առարկելի է) հեղինակություն: Այսպես թե այնպես անուրանալի է նրա վաստակը հայերենի, վերջինի բարբառների տեսության և առանձին բարբառների քննության մեջ<sup>31</sup>:

#### 4. Հայ բարբառների տեսության հիմքերը

Այդ հիմքերը տեսնում ենք 1864 թ. լույս տեսած աշխատության մեջ՝ նվիրված հայոց լեզվի ընդհանուր տեսությանը («Исследование о составе армянского языка», СПб., 1864. I-XXIII, 110 с.): Այն, ի դեպ, եղել է հեղինակի դոկտորական ատենախոսությունը՝ 30-ից քիչ անց տարիքում: Լույս է տեսել նաև ֆրանսերեն՝ Է. Պրուդհոմի թարգմանությամբ («Recherche sur la formation de la langue arménienne», տպագրված «Journal Asiatique»-ում, 1870, t. 2, p. 165 և հաջ., այնուհետև՝ առանձին գրքով, Մ. Ե. Դյուլորիեի՝ բնագրի աշխատասիրությամբ և ծանոթագրությամբ, Փարիզ, 1871), որպիսով նրանում առաջ քաշված տեսական դրույթները հայտնի են դարձել եվրոպացի հայագետներին և օգտագործվել են նրանց հետագա աշխատանքներում: Նկատենք նաև, որ Ֆ. Յուստին Գյոտինգենում լույս տեսնող պարբերականներից մեկում տվել է այդ աշխատության վերլուծությունը («Gött. gel. Ans.», 1866, St. 25, S. 991-1000):

Աշխատության էջ I-XXIII-ը ներածություն է (անվերնագիր), 1-ին բաժինը նվիրված է հայերենի հնչյուններին (էջ 1-28), 2-րդ բաժինը դիտարկումներ են քերականական ձևերի՝ հոլովման (ընդ սմին՝ դե-

30 Նկատելի են անցյալում նման համագործակցության փաստերը մշակույթի, գիտության պատմության մեջ, հիշենք, օրինակ՝ Նիկ. Մառի և Էջմիածնի միաբան Գ. Տեր-Սկրտչյանի տևական նամակագրությունը գիտական տարբեր հարցերի վերաբերյալ, որ եղել է արդյունավետ և նպաստավոր հայագիտության համար:

31 Ստորև առանձին անդրադառնում ենք այդ հարցին:



րանունների, էջ 28-73) և բայի (խոնարհման, էջ 73-110): Աշխատությունն ունի հարուստ բովանդակություն, նրանում արծարծվում են ժամանակի հայագիտության համար կարևոր հարցեր, որոնց տրվում են տեսական ճիշտ և յուրահատուկ լուծումներ<sup>32</sup>: Այս աշխատությունը հայոց լեզվի տեսության բնագավառում կարևորագույն ձեռքբերում է, որ գրեթե լիովին մնում է արդիական և շատ դեպքերում անշրջանցելի:

Բարբառների վերաբերյալ տեսական ի՞նչ հարցեր են արծարծված այդ գրքում՝ իբրև ընդհանուր լեզվի մի ուրույն տարբերակի քննություն:

ա) Պատկանյանը համարում է, որ «Գլխավորը, որ մինչև հիմա դեռ չի արժանացել գիտնականների ուշադրությանը, հայերենի բարբառներն են: Շատ բան բացատրվում են միայն բարբառների մանրագնին քննության պայմաններում», ընդ սմին՝ «նոր հայերենի բարբառները ոչ այլ ինչ են, քան հին բարբառների սերունդ («սերունդներ»)»<sup>33</sup>:

բ) Պատկանյանը բարբառների երկու հիմնական խումբ է ընդունում՝ այն հաշվով, որ նրանցում հին գրականի սահմանական ներկա (օր.՝ գրեմ «գրում եմ», խօսիմ «խոսում եմ» և այլն) և անցյալ անկատար (օր.՝ գրէի «գրում էի», խօսէի «խոսում էի» և այլն) ժամանակաձևերը վերածվել են ստորադասականի (գրեմ, խօսիմ, գրէի, խօսէի). «Փոքր-ինչ վերը մենք ասացինք, որ հայոց լեզվի բոլոր տարատեսակ խոսվածքները (= наречия) և բանավոր խոսքերը (= разговоры) կարելի է բաժանել հիմնականում երկու խմբի՝ արևելյան և արևմտյան: Երկու խմբում էլ հին սահմ. ներկ. (=Ind. Praes.) և անկատ. (=Imperf.) միաժամանակ վերածվել են ստորադասականի (Conjunctiv)» (ն. տ., էջ 16): Եվ ըստ այդմ՝ երկուսի համար նշում է հետևյալ տարբերակիչ հատկանիշները, որոնք միանգամայն հավասարաթեք հատկանիշներ են.

1) «Առաջինի տարբերակիչ հատկանիշ է տեղի (իմա՝ ներգոյական) հոլովը (locativus)՝ ում, ըմ, ամ, երկրորդում՝ համընկումը ուղղական հոլովի հետ կամ կազմված մեջ նախդրով» (ն. տ., էջ 16):

2) «Սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակը արևելյան խմբում ունեն բարդ կազմություն, տեղի (= ներգոյական) հոլովի վերջավորությամբ՝ սերված գոյանական բայի (= բայանվան) վեր-

32 Ի դեպ նկատենք, որ Պատկանյանը գիտական հստակ վերլուծությամբ և պարզ շարադրանքով գրող հեղինակ է:

33 Տե՛ս **Патканов К.**, Исследование о составе армянского языка, с. XIII. XV:

ջավորությունից, իսկ արևմտյանում՝ կու, կը, կի, կ՝ մասնիկներով, այդ նույն ժամանակներում՝ հայկյան լեզվի (= գրաբարի), առանց օ- ժանդակ բայի» (ն. տ., էջ 16).

3) «Անցյալ դերբայը արևելյան խմբում հին սովորությամբ վերջանում է ել, այն դեպքում երբ արևմտյանում այդ վերջավորությունը արդեն դարձել է եր. բերել և բերեր, գնացել և գնացեր և այլն» (ն. տ., էջ 17).

4) Նշում է, որ Ագուլիսում «...ձայնավորով սկսվող բառերն այս բարբառում ընդունում են ն տառը. ինչպես՝ ահել, ատել, ըրվալ (երևիլ) լինում են ոչ թե ահամըմ, ատամըս, ըրվամի, այլ նահամըմ, նատամըս, նըրվամի («ասում են, անում ես, երևում էի») և այլն» (ն. տ., էջ 20), միաժամանակ գտնում է, որ այդ ն-ն գալիս է գրաբարից՝ կապված in, en-ի հետ. Ագուլիս՝ ն՞որ «ո՞ւր» (ոչ թե՝ յո՞ւր) (ն. տ., էջ 20).

5) Ըստ այսմ՝ հեղինակը ուսումնասիրողներին տալիս է «հնարավորություն հեշտ յուրացնելու այն օրինակները, որոնք առաջին անգամ բավարար կլինեն նյութեր հավաքելուն պակաս չափով պատրաստվածներին՝ հայոց լեզվի մինչև այժմ պահպանված բոլոր բարբառների ապագա համեմատական քերականության համար. Sapienti sat (= Իմացողին՝ բավարար)» (ն. տ., էջ 23)<sup>34</sup>:

զ) Հայ բարբառների համար, անշուշտ, նշանակալից են Պատկանյանի այն տեսական դրույթները, որոնք, կարելի է ասել, թե հիմնականում դուրս են մնացել հետագա ուսումնասիրողներ կողմից՝ նման հարցերում այլ կողմնորոշում ունենալու բերումով. նշանք դրանից մի քանիսը:

1) «Ինչպես որ գոյություն չունի ազգ առանց ցեղերի, այդպես էլ հնարավոր չէ պատկերացնել լեզու առանց բարբառների» (ն. տ., էջ 2). այս երկատումը չի նշանակում այնպես, թե լեզուն ազգային է, իսկ բարբառը՝ ցեղային, այլ տեսականորեն արտալեզվականի (հասարակություն) հակադրմանը համարժեք կատարվում է լեզվականի (ինքնին լեզու) հակադրություն (հմմտ. ազգ / ցեղ  $\neq$  լեզու / բարբառ):

2) «Լեզու, «խոսվածք» (наречие) բառերը վերացարկված հասկացություններ են: Ժողովուրդների պրակտիկ կյանքում գոյություն ունեն բարբառներ, բանավոր խոսք (Mundart)» (ն. տ., էջ 3).

34 Պատկանյանը գրում է, որ իր «Ուսումնասիրություն հայ բարբառների մասին. Բանասիրական փորձ» (1869) աշխատությունը «որոշ իմաստով լրացնում է իր 1864 թ. լույս տեսած «Հայոց լեզվի կազմի մասին» վերնագրով աշխատությունը (1964 թ.)» (ն. տ., էջ 1).

3) Պատկանյան ճիշտ և հստակ տարբերում է փոխառություն (Lehnwort) և օտար բառ (Fremdwort) անվանումները՝ իբրև համապատասխան հասկացությունների նշանակումներ:

4) Այն միտքը, թե գրաբարից են առաջացել ներկայիս բարբառները «ներկայումս չի դիմանում քննադատությանը» (ն. տ., էջ 5). այս դրույթի անտեսման պայմաններում է, որ հետագա ուսումնասիրողները մի կողմից՝ կարծում են, որ գրաբարում բարբառներ գոյություն չունեին (կամ ընդգծված ձևով չկային) (Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Հ. Աճառյան և նրանց հետևորդներ), մյուս կողմից՝ հայերենի (նոր) բարբառները գրաբարից առաջ եկած տարբերակներ են (Հ. Աճառյան, Է. Աղայան, Գ. Ջահուկյան և ուրիշներ). գրական լեզու – բարբառ հարաբերակցությունը նույնն է, ինչ առհասարակ լեզու և խոսք երկատումը (դիխոտոմիան), որը լեզուների մասին ընդհանուր տեսական հարցերից է:

5) Պատկանյանը բերում է Հովհ. Երզնկացու (XIVդ.) խմբավորումը իր ժամանակին հայտնի բարբառների (թվով՝ 8. Կորձայք, Տայք, Խուրթ, Սպեր, Չորրորդ Հայք, Սյունիք, Արցախ, Այրարատ (և ոստանիկ) (ն. տ., էջ 9). Եվ ըստ Երզնկացու՝ գրական կրթության համար բավարար է սրանցից վերջինի իմացությունը, որ նշանակում է, թե՛ «ներկայիս հայ բարբառները ոչ թե տարակերպ աղավաղումներն են հին գրականի, այլ միայն հետևորդը հնուց գոյություն ունեցող առանձին խոսվածքների (наречия) հայ տարբեր բարբառների» (ն. տ., էջ 9–10)<sup>35</sup>.

6) Վերջապես, ըստ Պատկանյանի՝ գրական լեզուն (իբրև ընդհանուր և միասնական հաղորդակցման միջոց) ազգի միասնականացման հնարավորություն ունի, Գերմանիան միասնական է գերմաներեն գրական լեզվի շնորհիվ (ն. տ., էջ 3):

### 5. Հայ բարբառների «տարահատկանիշ» դասակարգումը

Ի տարբերություն Հ. Աճառյանի, այսպես կոչված, ձևաբանական միահատկանիշ է Գ. Ջահուկյանի վիճակագրական բնույթի բազմահատկանիշ դասակարգումների, որոնք լայնորեն (ինքնաբերաբար) ընդունված են հայ բարբառների վերաբերյալ գրեթե բոլոր աշխատություններում, Պատկանյանի կողմից կատարվածը, որ ներառում է մեկից ավելի (շուրջ մեկ տասնյակ, տեսական) հատկանիշներ, մենք համարում ենք «տարահատկանիշ» դասակարգում, և դա այն նկատառումով, որ նրա-

35 Այս դրույթը բարբառագիտական հետագա աշխատանքներում բազմիցս օգտագործվում է միջնորդաբար և անմիջական-բնագրագիտորեն:

նից առաջ ոչ մի ուսումնասիրող չի կատարել բարբառների որևէ կարգի դասակարգում՝ տերմինի իմացական-ձանաչողական իմաստով, եղել են, բնականաբար, միայն թվարկումներ («զանազանումներ»)՝ համաձայն բնակավայրերի («տարածքների») տեղորոշման<sup>36</sup>:

Պատկանյանը, նկատի ունենալով իր իսկ առանձնացրած հատկանիշները, տալիս է տասներկու բարբառի սեղմ՝ Արարատյան (կամ Կովկասյան), Թիֆլիսյան, Արևմտյան հայկական, Վանի<sup>37</sup>, Մոկսի, Սասունի, Բեյլանի, Ջեյթունի, Ջոկերի<sup>38</sup>, Ջուղայի<sup>39</sup> բարբառներ<sup>40</sup>:

Այնուհետև, Պատկանյանը գրքի հետագա էջերում մեկ առ մեկ անդրադառնում է ութ բարբառներին՝ դրանց բնութագրիչ մի շարք հատկանիշներով, վերջինների ցուցիչ օրինակներով՝ ոչ միայն հնչյունական համակարգի. այլև քերականական կառուցվածքի վերաբերյալ:

Նշենք միայն հնչյունականը՝ վերցնելով առավել նկատելի հատկանիշները.

1. Աստրախանի բարբառ ( 24-25). հատկապես՝ է < այ. հէր, մէր, ձէն < հայր, մայր, ձայն, ա-ի պահպանում. քաղաքում և այլն<sup>41</sup>.

2. Էրիվանի բարբառ (էջ 25).

ա) ոյ, իւ > ի. լոյս, քոյր, ձիւն > լիս, քիր, ձին,

բ) էի, էիր > ի, իր, ինք, իք, ին. գրում ի, փեսանում իք.

գ) բերեց > բերուց և այլն<sup>42</sup>.

3. Թիֆլիսի բարբառ (էջ 26).

ա) ե > ի. փես > փիս, ձեզ > ձիզ, գնում եմ > գնում իմ,

բ) ո > վու, որ > վուր, որդի > վուրթի,

գ) ուս > օ. կու սաէ > կօսէ, կու անէ > կօնէ, կու ածէ > կօծէ,

դ) հեռացիր > հիռացի,

ե) կու լինիմ > կուլիմ և այլն<sup>43</sup>.

36 Ի դեպ՝ տեղորոշմամբ անվանումները նշանակման մեջ ապահովում են երևույթի միայն արտալեզվական կողմը:

37 Գրքում բաց է թողնված 5-րդը, որը, թերևս, վրիպակ է. էական հատկանիշ է նշվում հ > խ անցումը հաց – խաց, հէր – խէր:

38 Էական հատկանիշ է ա > օ անցումը՝ խաչ – խօչ, հաց > հօց.. որով խոսում են Ազուլիսի բնակիչները և Ղարաբաղի մի քանի գյուղեր:

39 Էական հատկանիշ է հ > խ անցումը՝ հազար – խազար, նաև՝ գնում եմ – գնաման ամ:

40 Տե՛ս **Патканов К.**, Исследование о составе армянского языка, էջ XV:

41 **Патканов К.**, նշվ. աշխ., էջ 24-25: Այս բարբառով տպագրվել է Նոր Կտակարան, Բազել քաղաքում, տեղի միսիոներների ձեռքով:

42 Նույն տեղում. բնագրեր **Աբովյան Խ.**, Պ. Պռոշյանի «Սօս և Վարդիթեր»:

43 Նույն տեղում, էջ 26. բնագրերն են՝ Սայաթ-Նովա և «Մեղու», «Կռունկ Հայոց աշխարհի» (պարբերականներ):

4. «Քրդերենի բարբառ» (էջ 26–27). «այս խումբը, հավանաբար, պատկանում է արևմտյանին» (էջ 26). «Այտընյանի քերականության մեջ բերվում է այս լեզվով հետևյալ օրինակը. *էտոնց ընըլը ձգնա մզի մեր իգէր*, այն է՝ *էտոնց ամենն էլ ձեզնից մեզի պէտք էր գար»*. ընըն, փխ. *ա-մենն*, լը, փխ. *էլ*, ըղըրղ, փխ. *ղորղ* (< *ուղղորղ*) և այլն».

5. Ագուլիսի բարբառ (էջ 27–55). այս բարբառին գրքում տրվում է համեմատաբար ավելի մեծ տեղ. էջ 27–36-ում բերում է 8 բնագիր (տարբեր ծավալի և առանձին վերնագրերով), այնուհետև հնչյունական յուրօրինակություններ.

ա) *h*, փխ. *g*, առավելապես անցյալ ժամանակի դերբայներում. *կրըցըհած*, փխ. *կորցուցած*, *վիրայկահալ*, փխ. *վերէկացել*, *զըրմահած*, փխ. *զարմացած*.

բ) *h*, փխ. *u*. *ըհել* // *ահալ*, փխ. *ասել*. *տեհած*, փխ. *տեսած* (հմմտ. Թիֆլիս՝ *տեհնիլ*).

գ) *h*, փխ. *ju*. *հրօտ*, փխ. *խրապ*, *գիլլիհ* < *գլուխ*, *ծահուլ* < *ծախել*.

դ) *ju*, փխ. *p*. *էխանն* < *իքմին*, *ուխանն* < *ոքմին*.

Հետաքրքիր դիտարկում ունի Ագուլիսի բարբառի *կ / ք*, *բ / փ* և այլ իրողությունների (հմմտ. *գլուխ* – *կըլոխ / քլոխ*) վերաբերյալ. «Մենք դժվարությամբ ենք տարբերում դրանցից մի քանիսում՝ *գ*-ն *կ*-ից և *ք*-ից, *բ*-ն *պ*-ից և *փ*-ից և այլն»<sup>44</sup>: Եվ կարծում է, որ նման տարբերությունը, կապված հայտնի հնչյունական տեղաշարժի (Lautverschibung) հետ, արևելյան «ոչ բոլոր բարբառներում է տեղի ունեցել միաժամանակ և բոլոր դեպքերում». արևմտյանը որոշակիորեն տարբերվում է արևելյանից, «և գրերը, ստեղծված Արևելյան Հայաստանում, մեծ մասամբ հանդես են բերում այլ նշանակություն»<sup>45</sup> :

Եվ այսպես, «Արևելյան խմբի բարբառներում հնչյունները դեռ վերջին հաշվով որոշված չեն; Դրանցից շատերում գոյություն չունի, օրինակ՝ *բ, գ, դ, թ* են *բ, գ, դ* գրեր գործածվում են: Դրանք արտաբերվում են մոտ մերթ *պ, կ, տ*, մերթ *փ, ք, թ* հնչյուններին: Գրում են *բերան*, բայց կարդում *պերան* կամ *փերան*: Մեն միայն Թիֆլիսի բարբառում է միանման հնչյունների նրբերանգը որոշակի և պարզ»<sup>46</sup>:

44 Նույն տեղում, էջ 37-38:

45 Նույն տեղում, էջ 38:

46 Նույն տեղում, էջ 38: Իսկ 39-41-ում կետ առ կետ բերվում են ծայնավորներին վերաբերող տարբերություններ:

6. Ղարաբաղի բարբառ (էջ 55-73). մանրամասն տրվում են քերականական տեղեկություններ (էջ 42-73), բնագրային հատվածներ (էջ 55-64), ինչպես Ագուլիսի դեպքում է. իսկ հնչյունականներից են հետևյալները.

ա) Բառակազմի ձայնավորից առաջ *h*-ի ավելացում. *ինչ > հինչ*,

բ) *ե / է*, փխ *ս*. *սէն < քան, պեղմել < պարմել*.

գ) *օ*, փխ. *ու*. *օրախ < ուրախ, օնին < ունել*.

դ) *ի*, փխ. *ս*. *ինիլ < անել, իի < անել*.

ե) *ս*, փխ. *է*. *մաչը < մէջը, թս < թէ*,

զ) *ը*, փխ. *ս*. *հըրեւան < հարեւան*

է) *իւ*, փխ. *ու*, *ո*. *ջիր, պիլիւր < ջուր, բոլոր*.

ը) ձայնավորի անկում. *րիսս < երեիսս, րիգուն < իրիկուն*.

թ) դրափոխություն. *ոխձար < ոչխար, անգուջ < ականջ*.

ժ) *ղ*, փխ. *նգ, նկ*. *կաղնել, կանգնել, ըղնել < ընկնել*.

ժա) *նն*, փխ *յն, ոնն*. *ոններ < ոյրներ, մննան < մյրնէն (միտքէն)*.

ժբ) *հ*, փխ. *իւ*. *հաղ < խաղ*:

7. Խոյի բարբառ (էջ 74-76). բերվում է բնագրային մեկ հատված, նշվում են հատկապես հետևյալ հատկանիշները.

ա) *ի > է*. *մէր < միր. ամէս < ամիս, յղէ < ուղի, քամէ < քամի*.

բ) *ս*, փխ. *մ* (բայերում). *փիսէս ըմ < փաիսում եմ, տրնես սյ < տանում սյ*.

գ) Ապառնի դերբայ –*ական*, փխ. *ու*. *թողլական չեմ < թողելու չըմ, ըսըլանան ըմ < ասելու եմ, կիլական < գալու, ընըլական < անելու*

8. Ջուղայի բարբառ (էջ 76-103). այս բարբառին դարձվում է համեմատաբար լայն ուշադրություն. բերվում է նախ բնագրային ընդարձակ հատված, այնուհետև ծավալուն ներկայացվում են քերականական իրողությունները, նշվում են մեծ թվով հնչյունական հատկանիշներ.

ա) *իւ*, փխ *հ*. *իսց < հաց, խսյ < հայ*.

բ) ձայն + *յ* (*h* ?). *յիփ < երբ. յիգուց < էգուց, յէժան < էժան, յառէջ < առաջ*.

գ) *յոր*, փխ. *ւոր* (ածականի վերջում). *մեծայոր < մեծաւոր, գլխայոր < գլխաւոր, ձիայորվիլ < ձիավորվիլ*.

դ) *ս*, փխ. *է*. *յարակնադէմ < երեկնադէմ, դառ < դեռ, արախսյ < երեխսյ*.

ե) *ե*, փխ. *ս*. *լեւ < լաւ, մինեկ – մէնակ*.

զ) *ս*, փխ. *ու*. *աղորդ < ուղորդ. աղարկել < ուղարկել*.

է) *ու*, փխ. *իւ*. *ուղ < իւղ, ուր < իւր*.

ը) *ի*, փխ. *ա*. *իւիլ* < *աւել*.

թ) բայեր առանց *ն*, *չ-ի*. *փախել* < *փախչել*, *թռել* < *թռչել*, *թողել* < *թողնել*, *մտել* < *մտնել* (< *մտանել*).

ժ) միավանկ բառերի անցյալի 3-րդ դեմքում նախահավելված (*augmentum*). *իքեր* (< *եքեր*) < *բերեց*, *եկաց* < *կացաւ*, *եղես* < *տեսաւ*:

Այս ընդհանուր (սահմանելի) հատկանիշներից բացի՝ նշվում են նաև հատկանիշներ, որոնք «հնարավոր չէ տալ ընդհանուր կանոնով», այսինքն՝ դրանք մասնավոր դեպքեր են՝ *օֆտից*, փխ. *օգտից*, *ամբրել*, փխ. *ամրացղնել*, *խորուր* (*հեւր իւր*), փխ. *իւր հեւր*, *ն'ուստայ*, փխ. *որտեղից*, *ուստի* և այլն<sup>47</sup>:

### Եզրակացություններ

1. Քերովբե Պատկանյանը XIX դ. 2-րդ կեսի ռուսական մշակութային միջավայրում ամենահայտնի հայագետներից է: Նա թողել է գիտական հարուստ ժառանգություն, որ նշանակալից է եղել ոչ միայն իր ժամանակի գիտության զարգացման համար, այլև ունի մեծ վաստակ հայ գրավոր մշակույթը, հատկապես պատմական, աղբյուրագիտական և այլ բնույթի գրական հուշարձանները ռուսերենով հանրաճանաչ դարձնելու գործում: Ժամանակին Պետերբուրգի հայագիտական սաներից շատերը եղել են նրա աշակերտները՝ անվանի անուններ բոլոր ժամանակների գիտության պատմության մեջ:

2. Պատկանյանը սկզբնավորող հեղինակ է լեզուների համեմատական և հայերենի գիտական ուսումնասիրության բնագավառում: Նրա այդ բնույթի աշխատությունների մեծ մասը ժամանակին թարգմանվել է եվրոպական լեզուներով և հիմք հանդիսացել հայերենի վերաբերյալ գիտությանը հայտնի առանցքային նշանակության տեսությունների առաջադրման համար: Նա եղել է եվրոպական շատ արևելագետների և հայերենի մեջ մասնագիտացողների գիտական խորհրդատու և նամակագրությամբ ուղղորդողը:

3. Մեծ է Պատկանյանի գիտական ներդրումը հայերենի հնդեվրոպական բնույթի որոշման, ինչպես նաև հայ բարբառների տեսության մշակման հարցերում: Այդ հարցերում նա ոչ թե հետևորդ է, ինչպես ըն-

47 Նույն տեղում, էջ 84 : Գրքի էջ 103-104-ում բերում է «Приложение Мушский диалект»՝ դնում է բնագիր, այլև *Наречие польских армян* (с. 105-106) նաև բնագիր, նաև՝ «Образцы простонародной речи в Нахичевани на Дону» (с. 106-108)՝ դնում է բնագիր, իսկ ամենավերջում՝ «Киликийское наречие (в XIII веке) из Истории Смбата» (с. 108-109):

դունված է հետագա գրեթե բոլոր աշխատանքներում, այլ առաջնորդող, տեսական հիմնային գաղափարների և մոտեցումների հեղինակ: Այլ բան է, որ այդ գաղափարներին և մոտեցումներին հետագայում չեն դարձվել իրական (ռեալ) և ավելի առարկայական (օբյեկտիվ) ուշադրություն: Այդ հարցերում նա ոչ միայն տեսաբան է, այլև կոնկրետ նյութի հետորդական ուսումնասիրող:

4. Պատկանյանը հայ բարբառների ոչ թե, այսպես կոչված, աշխարհագրական դասակարգման հեղինակ է, ինչպես վերագրվում է նրան (չչփոթել Այտընյանի «տեսության հետ», որ գալիս է միջնադարյան հեղինակներից), այլ բուն լեզվական (բարբառային) չափանիշների («պարամետրերի») նկատառումով բարբառների գիտական դասակարգման սկզբնավորող, հիմք ընդունելով մեկ տասնյակից ավելի (հնչյունական, քերականական) հատկանիշներ: Նա բարբառների «տարահատկանիշ» (տարբեր բնույթի հատկանիշներ ընդգրկող) դասակարգման հեղինակ (հիմնադիր) է հայ բարբառագիտության պատմության մեջ: Սա է անվանի հայագետի տեսության իրական ձևակերպումը:

5. Հայերենի հնդեվրոպական բնույթի հարցում Պատկանյանի պատկերացումները և տեսական ելակետները հետագա ուսումնասիրողների գործերում համարվում են ոչ ինքնուրույն կամ ոչ առաջնային, այլ հետևորդի՝ ժամանակի եվրոպական լեզվաբանական տեսության: Պատկանյանը Հյուբշմանի հետևորդը չէ այս հարցում, այլ ավելին՝ նրա նոր տեսությունը՝ հայերենի դիրքի վերաբերյալ, լայն քննությամբ գնահատող և լրացումների վրա ուշադրություն հրավիրող, իսկ սա արդեն գիտական այլ իրողություն է:

6. Ի տարբերություն Հ. Աճառյանի միահատկանիշ դասակարգման, այն է՝ բայի սահմանական ներկայի և անցյալ անկատարի կազմության տարբերության հիմունքով հայ բարբառների խմբավորում, Պատկանյանը հայ բարբառների առանձնացում է երկու մեծ խմբով՝ «արևելյան» և «արևմտյան», որոնք միմյանցից զանազանվում են մեկ տասնյակից ավելի (այդ թվում՝ բայի սահմանական ներկայի և անցյալ անկատարի կազմության) հատկանիշներով, որի նկատառումով էլ կարելի է նրա այդպիսի խմբավորումը կոչել «տարահատկանիշ» դասակարգում՝ առաջին հայ բարբառների ձևաբանական բնութագրման պատմության մեջ: Աճառյանը ծանոթ պիտի լիներ օտար լեզուներով լույս տեսած Պատկանյանի աշխատություններին, նրա դասակարգման հատկանիշներից մեկի հիման վրա է իր տեսությունը կառուցում իբրև տեսական



մի այնպիսի հարացույց («պարադիգմա»), ինչպիսին դեռևս մի քանի տասնամյակ առաջ հայտնի էր:

7. Պատկանյանի գիտական ժառանգության մյուս մասը (հատկապես՝ աղբյուրագիտություն, ուրարտագիտություն և այլն) ևս պահում է իր արդիականությունը և կարող է ծառայել գիտության այդ բնագավառների պատմությանը վերաբերող նոր ուսումնասիրություններին:

**Վազգեն Գ. Համբարձումյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ընդհանուր և համեմատական լեզվաբանությունը, հայոց լեզվի պատմությունը, լեզուների տիպաբանությունը, հայ բարբառագիտությունը: Զբաղվում է հայերենի համեմատական ուսումնասիրությամբ, հայերենի ստուգաբանությամբ՝ կատարելով լրացումներ և ձգբրտումներ: Հեղինակ է երեքուկես տասնյակից ավելի մենագրությունների, չորս՝ գրաբարից աշխարհաբար ծավալուն թարգմանությունների, երկու հարյուր հիսունից ավելի տարբեր լեզուներով լույս տեսած գիտական հոդվածների և զեկուցումներ թեզերի՝ հայերեն և այլ լեզուներով:

Էլ **հասցե՝** vazgengurgeni@mail.ru,  
vazgenhambardzumyan@aspu.

Summary

## **KEROPE PATKANYAN AND THE INDO-EUROPEAN CHARACTER OF ARMENIAN ISSUES AND THEORY OF ARMENIAN DIALECTS**

**Vazgen G. Hambardzumyan**  
*Doctor of Philological Sciences*

**Keywords** - Russian oriental studies, Armenian studies, Armenology, Armenian historians, literary monuments, Uart studies, humanitarian science, scientific consultant, originator of foundations.

In the second half of the previous century, the Armenian culture experienced significant development in the environment of the Russian Empire, the role of the St. Petersburg academic institution was particularly significant, where Kerope Patkanyan carried out his extensive scientific activities (1833-

1889). His contribution to the progress of Armenian philology and linguistics is great. He represented various fields of Armenology and Armenian studies, the best researcher and spreader of relevant knowledge both in Russia and Europe. Patkanyan is an internationally recognized Armenologist.

The years of his scientific activity were the 1860s to the 1880s, a short period, and the famous scientist left a rich legacy, became a tireless organizer of science, mentored students who later gained great recognition in various fields of humanitarian science in general, and became a concerned and serious advisor about the Armenian language of many European armenologists in their scientific activities.

Patkanyan's works are quite impressive in terms of their nature, volume and coverage of fields. He left literary-artistic and bibliographic works, scientific publications of historiographical and translational works, wrote concise and fundamental works on the Armenian language and Armenian dialects, has a theory with a wide coverage of the material on issues of historical and comparative study of Armenian, his works on Armenian philology, ethnography (studies of sources), lexicography, but also general oriental studies, and urartian studies.

Patkanyan's linguistic heritage has been addressed to some extent, but not with a theoretically sound assessment. He is rightfully the predictor of the foundations of the theory of Armenian dialects and the classification of dialects "with various features" using the internal means of the language (phonetic system, vocabulary and grammatical structure). Such a classification of Armenian dialects is the contribution of a famous linguist to Armenian dialectology. His scientific legacy is a great contribution to the development of modern Armenian studies.

## КЕРОПЕ ПАТКАНЯН. ИНДОЕВРОПЕЙСКИЙ ХАРАКТЕР АРМЯНСКОГО ЯЗЫКА И ТЕОРИЯ АРМЯНСКИХ ДИАЛЕКТОВ

Вазген Г. Амбарцумян

Доктор филол. наук

**Ключевые слова** - российское арменоведение, арменистика, арменоведение, армянские историки, литературные памятники, урартология, гуманитарная наука, научный советник, основатель концепций.

Во второй половине XIX в. армянская культура начала интенсивно развиваться в Российской империи. Особенно значительна была роль Петербургской академической среды, где Керопе Патканян (1833-1889) вел свою обширную научную деятельность. Неоценим его вклад в развитие армянской филологии и языкознания. Он представлял арменистику и арменоведение, был лучшим исследователем и распространителем знаний из этих областей науки как в России, так и в Европе. Патканян – арменолог международного уровня.

Годы его активной научной деятельности – 1860-1880-е гг., период небольшой, но знаменитый ученый оставил богатое наследие, стал неутомимым организатором науки, имел учеников, получивших впоследствии большое признание в различных областях гуманитарной науки в целом, и стал востребованным консультантом в сфере изучения армянского языка многих европейских арменоведов в их научной деятельности.

Работы Патканяна впечатляют по своему характеру, объему и разнообразию тематического материала. Он оставил литературно-художественные и библиографические труды, научные публикации историографических и переводческих работ, написал многочисленные работы и фундаментальные труды по армянскому языку и армянским диалектам, собрал и систематизировал огромный материал по вопросам исторического и сравнительного изучения армянского языка. Имел труды по армянской филологии, этнографии, лексикографии, а также по общему востоковедению, урартоведению.

Лингвистическое наследие Патканяна в какой-то степени рассматривалось специалистами, но не получило теоретически обоснованной оценки. Он по праву является основоположником теории армянских диалектов и основателем «разнопризнаковой» классификации диалектов, использующей внутренние свойства языка (фонетическую систему, словарный запас и грамматический строй). Данная классификация армянских диалектов является неоценимым вкладом известного лингвиста в армянскую диалектологию, а его научное наследие - в развитие современного арменоведения.

## Օգտագործված գրականություն

1. **Акопян Э. А.**, Керопэ Патканов (жизнь и творчество), Ереван, Изд-во АН Арм. ССР, 1975:
2. **Աղայան Է. Բ.**, Հայ լեզվաբանության պատմություն, հատ. 1, Եր., 1958:
3. **Ամիրջանյան Ս. Հ.**, Հայագետ Հայրիկու Պետերմանի նամակները Քերովբե Պատկանյանին, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, N 2, էջ 76-83:
4. **Ամիրջանյան Ս. Հ.**, Քերովբե Պատկանյանը որպես համեմատաբան, «Լրաբեր հասարակական գիտություններ», 1988, N 1, էջ 53-62:
5. **Ամիրջանյան Ս. Հ.**, Քերովբե Պատկանյանը հայ լեզվաբան (թեկն. Ատենախոս., ձեռագիր. գիտ. դեկ. ՀՀ. ԳԱԱ թղթ.-անդամ Ա. Ա. Աբրահամյան), Եր., 1988:
6. **Амирджаниян С. Г.**, Керопэ Патканян как армянский языковед (автореферат канд. дис.), Ереван, 1988:
7. **Այտրնեան Ա.** Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:
8. **Գարեգինյան Գր.**, Աճառյանը Փարիզում և Սորբոնում, «Հ. Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից», Եր., 1967, 189:
9. **Գրիգորյան Ա. Վ.**, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957:
10. «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 9, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 152-153:
11. «Հայկական համառոտ հանրագիտարան», հատ. 4, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 2003, էջ 164:
12. **Ղարիբյան Ա. Ս.**, Համառոտություն հայ բարբառագիտություն, Եր., 1941:
13. **Ղարիբյան Ա. Ս.** Հայ բարբառագիտություն (Հնչյունաբանություն և ձևաբանություն), Եր., 1953:
14. **Ղարիբյան Ա. Ս.**, Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջը, «Տեղեկագիր» ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, 1952, N 8, էջ 41-58:
15. **Սաղյան Մ.**, Պատկանյաններ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982:
16. **Ստեփանյան Գ. Խ.**, Կենսագրական բառարան (Հայ մշակույթի գործիչներ), հատորով, հատ. Գ, գիրք 1 (Մել. – Ռ.). 1990, էջ 245:
17. **Эмин М.**, Профессор Патканов как ориенталист, СПб., 1874:
18. Энциклопедический словарь, издатели Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, т. XXIII, С. Петербург, 1898:
19. Энциклопедический словарь русского библиографического института Гранат, 11-е стереотипное издание, т. 31, М. (տարեթիվ չի նշված):

## REFERENCES

1. **Akopyan E. A.**, Keropē Patkanov (Jizn i tvorch'estvo), Yerevan, Izd-wo Arm. SSR, 1975 (In Russian).

2. **Aghayan Ē. B.**, Hay lezvabanut'yan patmut'yun, hat. 1, Er., 1958 **(In Armenian)**.
3. **Amirjanyan S. H.**, Hajaget Hajnrigh Petermani namaknerë Qerovbe Patkanyanin, "Patma-banasirakan handes", 1986, N 2, ëj 76-83 **(In Armenian)**.
4. **Amirjanyan S. H.**, Qerovbe Patkanyanë vorpes hamemataban, "Iraber hasarakakan gitut'junneri", 1988, N 1, ëj 53-62 **(In Armenian)**.
5. **Amirjanyan S. H.**, Qerovbe Patkanyanë hay lezvaban (t'ekn. atenos., jeřagir, git. ghek. HH GAA t'ght'.-andam A. A. Abrahamyan), Er., 1988 **(In Armenian)**.
6. **Amirjanyan S. H.**, Qeropë Patkanyan kak armqnskiy jazykoved (avtoreferat kand. dis.), Yerevan, 1988 **(In Russian)**.
7. **Ajtënean A.**, Qnnakan qerakanut'iwn ařharhabar kam ardi hajerën lezui, Vienna, 1866 **(In Armenian)**.
8. **Gareginyan Gr.**, Acharyanë P'arizum ev Sorbonum, H. H., Acharyan, Kjanqis huřerits', Yerevan, 1967, ëj 189 **(In Armenian)**.
9. **Grigoryan A. V.**, Hay barbařagitut'yan dasënt'ats', Yerevan, 1957 **(In Armenian)**.
10. "Haykakan sovetakan hanragitaran, hat. 9, Yerevan, HSSH GA hrat., 1983, ëj 152-153 **(In Armenian)**.
11. "Haykakan hamařot hanragitaran", hat. 4, Yerevan, HSSH GA hrat., 2003, ëj 164 **(In Armenian)**.
12. Hamařotut'yun hay barbařagitut'yan, Yerevan, 1941 **(In Armenian)**.
13. **Gharibyan A. S.**, Hay barbařagitut'yun (hnh'yunabanut'yun ew djevabanut'yun), Yerevan, 1953 **(In Armenian)**.
14. **Gharibyan A. S.**, Hay barbařneri dasakargman harte'i řurj, "Teghekagir" HSSŘ Gitut'yunneri akademiayi, 1952, 8, ëj 41-58 **(In Armenian)**.
15. **Saghyan M.**, Patkanyanner, Yerevan, HSSH GA hrat., 1982 **(In Armenian)**.
16. **Step'anyan G. X.**, Kensagrakan bařaran (Hay mřakujt'i goritcch'ner), hat. G, girk' 1 (Mel.-Ř), 1990, ëj 245 **(In Armenian)**.
17. **Ēmin M.**, Professor Patkanov kak orientalist, SPb., 1874 **(In Russian)**.
18. Ēntsiklopedich'eskiy slowarë, izdateli F. A. Brokgauz, I. A. Efron, t, XXIII, S. Peterburg, 1898 **(In Russian)**.
19. Ēntsiklopedich'eskiy slowarë russkogo bibliografich'eskogo instituts Granat, 11-e stereotipnoe izdanie, t. 31, M. **(In Russian)**.